

ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ԸՆՈՒՆԵՐԸ	ՖՐԱՆԿ .	ՀԱՐՈՒՍԱՅԻՆ .
Անգղիա .	65 .	20 .
Գաղղիա .	33 .	31 .
Գերմանիայի Ա հասարակապետութիւնը .	33 .	21 .
Հոլանտա .	32 .	
Պելճիա .	26 .	
Տանիմարքա .	25 .	64 .
Գերմանական գաշնակցութիւն .	20 .	57 .
Սաքսոնիա . Պաւերա .	17 .	20 .
Բրուսիա .	20 . 19 .	96 .
Աննովեր . Վիթթմպերկ .	16 . 15 .	77 . 63 .
Փորթուգալ .	15 .	32 .
Սարտենիա .	15 .	10 .
Թոուքանա . Լուքա .	13 .	33 .
Հոմ , Սիկիլիա .	11 .	58 . 32 .
Մոնպոյ .	11 .	
Աւստրիա .	10 .	70 .
Շուէտ .	10 .	86 .
Օսմ . տէրութիւն .	10 .	
Փարմա , Մոտենա .	10 .	
Սպանիա .	7 .	76 .
Ռուսաստան .	6 .	20 .
Զուիցերի .	5 .	99 .

Եւ ցուցակով կը տեսնուի որ Եւրոպայի միջին տէրութիւնները , այսինքն Բնգղիան , Գաղղիան , Ստորին Նա-հանգները , և արեւմտեան Գերմա-

նիան աւելի ծաղկած են վաճառակա-նութեամբ , քան թէ հիւսիսային և հարաւային մասերը , որոնց տուրքը քիչ է :

Հ . Հ . Թ

Պատկեր :


Եւրոպոս երկրին հին ատենը ինչ աստիճանի ծաղկած ըլլալը՝ հիմա միայն իր մեծամեծ քաղաքներուն աւերակներէն կ'իմացուի . ինչպէս տեսանք նաև Պալմիրայի աւերակներուն ստորագրութեանը մէջ¹ : Եւսպիսի քաղաքներուն մէկն ալ է Պատկէք ըսուածը , որ հին ատենի Հելլոպոլիսն է , ու հայերէն Եփ քաղաք ալ կ'ըսուի² :

Եւնաց ու Հուլմայեցւոց հին պատմիչներէն խիստ քիչ տեղեկութիւն ունինք աս քաղաքիս վրայ . և

¹ Տես Հատ . Գ . երես 201 :

² Վասն զի Հելլոպոլիս բառը յունարէն աբէ-գախ քաղաք կը նշանակէ : Գիտնալու է որ աս ա-նունով իրեք քաղաք կար հին ատենը . մէկը ասի-կայ , որ Հելլոպոլիս Ասորոց կ'ըսուէր . երկրոր-դը Եփպատոս՝ Գահիրէի արեւելեան կողմը . եր-րորդը Նիկիայի մէջ :

զարմանալին աս է որ թէպէտ Պատկէքին աւերակներէն յայտնի կը տեսնուի անոր շատ երևելի քաղաք եղած ըլլալը , և սակայն երկու հարիւր տա-րի հազիւ կայ որ Եւրոպացիք ճանչ-ցեր են աս քաղաքը : Ս ասն զի քանի մը անգղիացի վաճառականներ Եւրա-բացւոցմէ լսելով թէ մեծ քաղաք մը կայ անապատին մէջ որ Սողոմոն ի-մաստունը շիներ է կ'ըսեն՝ Սաբայի դշտիցին համար , գնացեր են տեսնե-լու . անով ուրիշ ճամբորդներ ալ սկսեր են երթալ տեսնել ու ստորա-գրել : Հոս դրուած պատկերը՝ Պատկէքին հարաւային կողմի տեսքն է . պատկերին ձախ կողմը երևցած մեծ շէնքը արեգական տաճարն է . անոր քովի շինուածքը անկէ պզտիկ , բայց աւելի լաւ պահուած է : Հիմակուան քաղաքին բնակիչները քիչևոր են , ու մեծ մասը Սիւթիկէլի ըսուած կա-տաղի Եւրաբացիքն են :



Պատկեր :

Պատկերի աւերակներուն մէջ ամենէն զարմանալի բանը մէյմը արեգական տաճարն է, մէյմըն ալ հին պարսպին մնացորդները : Ամարթին գաղղիացի բանաստեղծը, որ 1833^{ին} ան կողմերը ճամբորդութիւն ըրեր է, շատ գեղեցիկ ոճով կը ստորագրէ աս աւերակները. այնպէս որ կ'արժէր որ մենք ալ հոս գոնէ քաղելով թարգմանէինք իրեն ստորագրութիւնը, բայց անանկով ալ շատ երկայն կ'ըլլար : Այն տեսակ ազնիւ մարմարիոններով, սիւներով, սեան գլուխներով, խարիսխներով, արձաններու կտորներով ծածկուած է կ'ըսէ գետնին երեսը : Հնուածքներուն մէջ կտորներ կան այնպէս ամբողջ ու աղէկ պահուած՝ որ կարծես թէ երե-

կուան օրը շինուեր են . իսկ սիւներուն ու պարսպին մնացած քարերուն մեծութիւնը տեսնելով մարդս կը զարհուրի :

Շատ փաստուեր են Պատկերի աւերակները ան մեծ գետնաշարժէն որ եղեր է հոն 1759^{ին}. անոր համար 1751^{ին} մեծ տաճարին մէջ ինը սիւն կայ եղեր, բայց հիմա վեց հատ միայն մնացեր են : Այնպէս հասկընալու է նաև մեր Հայաստանի աւերակներուն վրայ. ան ատենը չենք զարմանար թէ ինչպէս կ'ըլլայ որ ասկէ քսան կամ երեսուն տարի առաջ ուրիշ ճամբորդներ շատ աւելի բան տեսեր են տեղ տեղ, ինչպէս Այն քաղաքին աւերակներուն մէջ, ու հիմակուան ճամբորդները ան բաները չեն տեսներ :